

գաւոր գտցի զօր կիւրակէին պահելով, ուրոշեցի » (Առք. ԾԹ): Այս հրամանը, կրկնուած նաեւ Բ Նիկէական անվաւեր կանոններէն (Նիկ. ԿԸ), ծնունդ է առաջին դարերու մէջ տիրող սովորութեան, որով փրկչական յարութեան զուարթարար յիշատակին հետ պահոց տխրութիւնը չէր խառնուեր<sup>1</sup>, նոյն իսկ քառասնորդաց մէջ: Ասոր համար Հոովմայ եկեղեցին կիւրակէները չէր պահեր, իսկ արեւելք շաբաթներն ալ կը լուծէր<sup>2</sup> աւագէն զատ: Այս հաշուով՝ կիւրակէն կերողները պահքը կը սկսէին զատկէն վեց եօթնեակ յառաջ, որով կը պահէին երեսուն եւ վեց օր, եւ արեւելք կը սկսէին եօթ եօթնեակ յառաջ, եւ կը պահէին նոյնպէս երեսուն եւ վեց օր (Կարբ. Բ, 2142): Քառասուն օրը լրացնելու համար՝ Լատինք յետոյ ըստ Ը դարու վկայութեանց աւելցուցին պահոց սկիզբը չորս օր եւս, սկսելով չորերշաբաթէն՝ ինչպէս դեռ այսօր կ'ընեն<sup>3</sup>:

1. Հրեայք ալ հանդիսական օրեր պահք չէին պահեր. Յուդիթ՝ որ ամբողջ այրութիւնը պահօք անցուց, շաբաթ՝ ամսամտից ու տարեկանաց օրերուն կը լուծէր (Յդթ. Ը, 6): Տեսանք նաեւ վանականաց կերակրափոխութիւնը տօներուն (աստ, 290):

2. Եւագրի առ վանականս մէկ խրատը, եթէ հարազատ է, այդ երկու օրերն ալ պահել կու տայ « մինչեւ ցինն ժամն » (Եւագ. 139):

3. Տաթեւացին անտեղեակ այդ հաշուին, անտեղի